

ընկերէն ՚ի վեր տամարական զննութեանց հետամուտ է, 4,733,000 կը դնէ Հայոց թիւը, և այդ գումարոյն մասերը քննելով չեմք կրնար զայն չափազանց համարել: Եւրոպիոյ մէջ յառաջագէտ ազգեր և բարեկարգ պետութիւններ ալ կան, որ հազիւ այդ գումարոյն կէսը անհասներ կը պարունակեն: Եթէ ոք ըսէ թէ անոնք ամբողջ սահմանի մը մէջ խրմբուած են և ուղղակի դուրսկցութեամբ զօրութիւն մի կը ձևացնեն, ճշմարիտ խօսած կըլլայ, և Հայոց չը կրնար այդ օգուտը ունենալ. քանի՜ ջրը իւր անհատը վարատական են ծանօթ աշխարհաց մէջ, և ճապա՛յէն յՄանչլսթէր, յեթովպիոյ ցեղ-թերապուրկ մերազդիք կը դառնուն ընկիւք և ընակութիւն հաստատած: Բայց երբ սխալ կըսեմք, պէտք է այնպէս իմանալ, որ ամէն տեղ հաւասարապէս տարածութիւն չունի, և չունենայ տեղ մը ուր աւելի բարձրագոյն իցէ թուով: Եթէ տունումք մեծ չափուի, ճոռոջ չափուի ուստի

օգնութիւն մը տալ կու գէ : Զուարճարան թղթակից մ'անցեալ օր մեր լրագրին (Սթանտարտի) մէջ առաջարկեց որ եւրոպիոյ հարուստ Հրէայք վեց միլիոն անգլիական օսկի վճարելով Երուսաղէմը Սուլթանէն դընեն : Մեք այն նամակն իբրեւ հետաքրքրական հրատարակեցինք, և հասարակութիւնն ալ զայն կարգաւոր հաւանականութեամբ ծիծաղած է : Անկէ 'ի վեր ուրիշ առաջարկութիւն մ'եւրեան դալը չտեսանք : Ճշմարիտ է որ Կիսկոսի եկամուտները կան, և կարծիք յայտնուեցաւ որ փոխառութիւն մ'իր երաշխաւորութիւն կրընան ծառայել՝ եթէ անգլիական կառավարութիւնն յանձն առնու հրակել որ այդ եկամուտներն յատկացեալ նպատակին համար միայն դործածուին :

« Մինչև ցարդ անգլիական կառավարութիւնն իրեն առաջարկեալ դերն ընդունելու որ և է տրամադրութիւն մը չցուցուց : Մնաց որ, եթէ ընդունել իսկ, այս կերպիւ ձեռք բերուած գումարն Օսմ. երեւոյց նախարարին հաղիւ պիտի բաւէր դրամով վճարումները վերատին սկսելու : Անկէց զատ հարցուեցաւ թէ արդեօք Կիսկոսի եկամուտները թուրքիոյ նախկին պարտուց յատկացած չեն : Եթէ պատերազմական տուգանաց վճարման համար առաջնութիւն պահանջելու իրաւունքը զրացուեցաւ թուրքիոյ, ինչպէս հնար է մի և նոյն առաջնութիւնը պահանջել պարսիքի մը համար՝ որ դեռ գոյութիւն չունի, և սակայն, եթէ եւրոպական դժուարութիւնը չլուծուի, Օսմանեան պետութեան վերածնութիւնն անհնար կը թուի մեզ : Այսպիսիսի դժուարութիւն մ'է, զոր պէտք չէ անգլիոսնապալու կամ հարեւանցի կերպիւ դարմանելու ջանալ :

Անգլիոյ մէջ առեւտրական տագնապը կը շարունակէ : Գաղթականութեան նախարարը մօտեցաւ խօսած մէկ ճառին մէջ ըսաւ թէ այս տագնապին մէկ գլխաւոր պատճառը սա է որ Անգլիոյ գործարանները չափէն աւելի արդիւնք արտադրած են, որ արդէն վաճառաց գնոյն անկման կառաջնորդէ, և միւս կողմէն ալ Եւրոպիոյ և Ամերիկայի մէջ Անգլիական վաճառքներն ընդունելութիւն չը գտնելով առաջուան չափ ալ չեն ծախուիր : Այս ձախող վիճակին դարման մը տանելու համար՝ պէտք է նոր հրապարակ մը գտնել, ուր հնար

լինի Անգլիական վաճառք դրկել, և այժմ Արիւիկէ կընայ այդ ընդարձակ հրապարակը լինիլ : Ուստի Անգլիական կառավարութիւնն երկրին արուեստներուն արգասիքն Սիւրիկէի մէջ տարածելու միջոցներ ձեռք պիտի առնու :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(ՀԱՎԱՍ)

Վերապլ 50 յունի.
Հանրապետութեան նորընտիր նախագահ Պ. Կրէվի խնդրեց ներկայ նախարարութեան անդամներէն, որ գործող վարչութիւնը շարունակեն, կամ գէթ առ ժամանակեայ կերպիւ իրենց պաշտօնին վրայ կենան :

Նախարարը վաղը պիտի խորհրդակցին այս առաջարկին վրայ :

Մարէշալ Մար-Մաճոն շնորհակտութեան դնաց Պ. Կրէվի, և վաղը խորհրդակցելու երթալ Գաղղիոյ հարաւակողմը :

Այս առաջիկայ հոգած հետաքրքիր

Վիէննա 31 յունի.
Փարիզի Օսմ. նորընտիր դեսպան Սաֆ. վէթ փաշան այսօր Կէս օրին Աւստրիոյ կայսեր ներկայացաւ :

Քօթենհակ 50 յունի.

Նորընտիր աղգային ժողովը Պ. Գրապը վերստին նախագահ ընտրեց :

Փարիզ 31 յունի.

Օսմ. Քօնս. 12, 17 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ դեսպանն հինգ շաբթի օրը Բ. Գուռն երթալով երկար տեսակցութիւն մ' ունեցաւ Մեծ-Եւ պարքոսին հետ :

Վեհ. Սուլթանը վախճանեալ յաւիւ Շէրիֆ փաշային ստացած 40000 լիւր ամսականն անոր ընտանեացը տալ հրաւանցեց :

Վաղըթի խօսքին նայելով, մայրաքաղաքին Սերպիական դեսպանին Օսմանեան հողին մէջ բնակող Սերպիացիւց վրայ ունենալիք իրաւասութեան աստիճանին նկատմամբ Բ. Գրան և Պ. Գրիլթիլի միջև ծանր անհամաձայնութիւն մը ծագեւ է :

Երսուի թէ դրամատեսաց նոր խմբակ մը Բ. Գրան ծրագրի մը ներկայացուցեր են, որով կառաջարկեն եղեր Օսմ. պետութեան բոլոր եկամուտներն իրենց ձեռքն առնելով՝ տարին 30 միլիոն օսկի վճարել կառավարութեան : Այս գումարին 12 միլիոնն Օսմ. պարտուց տոկոսին և գլխամասին

ինչպէս նաև պատերազմական տուգանաց վճարման պիտի յատկանայ : Մնացածն ալ 18 միլիոնին 8 միլիոնն ալ հասարակային շինութեանց պիտի գործածուի :

Թուրքո-Հելլենական յանձնախումբին Օսմ. երկրորդ պատուիրակ Կոստանդ փաշան երկու քարտուղարաց ընկերակցութեամբ երէկ թրիէստի շոգենաւով մայրաքաղաքէս մեկնեցաւ : Ի Բրէվէզա :

Պուրէշէն գրուած նամակներ կը ծանուցանեն թէ փարիզի նորընտիր դեսպան Բարձր. Սաֆ. վէթ փաշան Ռուսներու անցած միջոցին տեղական կառավարութեան կողմէ փառաւոր ընդունելութիւն եղեր է, և Կոստանդ իշխանն ալ մեծ կոչումը մը տրուել է 'ի պատիւն Ն. Բարձրութեան :

Սամս կղզւոյն աղգային ժողովին կողմէ առ Բ. Գուռն քաջաւած հետադիւր մը կը ծանուցանէ թէ Շրուց և Զապլիսք բերդաքաղաքները Գարաւ տալցոյց յանձնուեր են :

Շրոտայէն քաջաւած հետադիւր մը կը ծանուցանէ թէ Շրուց և Զապլիսք բերդաքաղաքները Գարաւ տալցոյց յանձնուեր են :

Օտէսայի Ռուսական շոգենաւը՝ նաւահանգստին սառելուն պատճառաւ՝ երէկ առաւօտ հասաւ մայրաքաղաքս :

Սուէիշէն երէկ Կ. Պօլիս եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Լոյսի ընկերութեան Արէթուա շոգենաւը ձիւտէի մօտ ցամաք իյնալով խորտակել է : Անձի կորուստ չէ եղած :

Պուլլարաց աղգային ժողովն յառաջիկայ փետրվար ամսոյ 10ին Թըրքնօլա պիտի գումարին :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԴՈՒԹՅՈՒՆ

ԵՍՉԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՔ	
Երէկ իրիկուն գոցուեցաւ	43.40
Այս առաւօտ բացուեցաւ	43.42
Կէս օրին	43.43
Բոմբիլի երկաթուղի	Քր. 47
Թղթաղարմ	Լր. 449

Օսմ. կայսերական Պաշտօն այսօր 120 լիւր գին որոշած է փոխանակութեան :

ուրու թիւն, քաղաքացիութիւն և վաճառականութիւն, ուսումնական արուեստ և ձեռագործ արուեստ, վարժարաններ և անկեղծայններ, գործարաններ և շտեմարաններ, տղաւաններ և գրասենեակներ, սեղանաւորներ և պաշտօնականներ, մատենաներ եւ օրագիրներ, թատրոններ և թատրերգութիւններ, երաժիշտներ և դերասաններ, արուեստագործներ և գործաւորներ, մէկ խօսքով ամեն ճիւղէ և ամեն տեսակէ գործեր և գործողներ, որովք աղգ մը կապրի և կաճի և կը զարգանայ :

Մինչ ցարդ միւլթարական է, այլ ցաւալի մասն ալ կայ, և այն է որ այս ամենայն դեռ բողոք է, դեռ սկզբնաւորութեան մէջ է, որով և հասմանաւորաւ ալ քիչ է, տկար է, յոգաւոր է և որ աւելի փոքրեաւորներ է՝ բողոքները դիւրաթափուած և արագալսմամբ լինելու երեւոյց են ուստի և Հայոցն սկզբնայն չեսուեր Հայ սկիւտերը կատարեալ միւլթարեր Միւս ցաւալին ալ այն է, որ այդ ա-

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Երէկ Աղգ. ժողովը գումարեցաւ Դալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին առ ժամանակեայ նախագահութեամբ խղիւղեան Գեր. Մատթէոս եպիսկոպոսի և ատենապետութեամբ Արաւանեան Վահմ. Ստեփան փաշայի :

Ատենը ժամը 7 1/2 ին բացուելով, երեսփոխան ժամակոչեան և Գ. լուսնան էֆէնտիներու ղրկած պարզ հրաժարականներն, ինչպէս նաև Կիւմիւլիէրտանեան Ռուբէն էֆէնտիի հրաժարականն ընդունուեցան : Գերարէեան Զարեհ էֆէնտի ալ երեսփոխանական հրաւերին պատասխանել չուզելուն համար հրաժարեալ համարուեցաւ :

Յետոյ Ս. Պատրիարք Հօր մէկ նամակը կարդացուեցաւ, որով Ն. Սըրբաղնութիւնն հրաժարական կուտոր Պատրիարքական պաշտօնէն՝ պատճառ ցոյց տալով իւր անձնական ակարութիւնն, և յայտարարելով միանգամայն թէ ինք անկարող է այլ լեւա աղգին գործերն իւր բաղձնաց համեմատ կատարել, և թէ հարկ է նոր եռանդ և ոյժ ունեցող անձ մ'ընտրել իւր տեղ :

Ժողովը այն հրաժարականն սկզբաւմ ընդունելով որոշեց ինդըր Ն. Սըրբաղնութեանն՝ որ բարեհաճի շարունակել իւր պաշտօնը մինչև ցնոր անօրէնութիւն :

Յետոյ պիւտժէի խնդրոյն ձեռնարկուելով ծախուց մասն ամբողջապէս քուէարկեցաւ, և ժամ 10ին առեանք վերցաւ 15 օրէն գումարուեալու որոշմամբ :

Տէրէնտէի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսէն Պատրիարքարան եկած տեղեկագիր մը՝ դաւառնմէջ բնակող չէրքէններուն գործած հարստահարութեանց երեսէն տեղւոյն ժողովրդեան կրած տառապանքը նկարագրելով դարման կը խնդրէ :

Ի նպատակ Արարատեան աղգօղուս ընկերութեան հինգ շաբթի իրիկուն լիտորատոյի սրահին մէջ տրուած պաշտանդէան, ինչպէս երէկուան թըւուով ծանուցինք, կատարեալ յաջողութիւն ունեցաւ : Մայրաքաղաքին Գաղղիական թերթերն յիշեալ պաշտանդէաւ մեր աղգին համար պատուաբեր իրողութիւն մը կը նկատեն :

Լիտորատոյի սրահն զմայելի կերպիւ զարդարուած ու լուսաւորուած էր : Բոլոր օթեակներն աղգային և օտարաղղի պատուաւոր ընտանիքներ գրաւած էին, և հանդիսականաց մեծ ծախուռն բաղմութեան պատճառաւ

մենայն այն համեմատաբար սակաւաւոր մասին մէջն է, որ հայաբնակ դաւառներու շրջանակին սրբունուականութեան դուրս կը գտնուի, որով և այդ բարի սկիզբնաւորութիւնը միայն ակար աղգեցութիւն մը կը գործածեն Հայոցն մեծամասնութեան վրայ :

Նիւթերուն շարոյցաւորութիւնը անպակի կերպով զիւր բերաւ Հայոցն ապագային մէջ ձգեց : Բայց ես այդ ծանրակշիւ մասին մէջ չմտած, պիտի խնդրեմ, որ սակաւի մի խօսողիս հանգիստ տալ, և լողըդ իսկ հանգիստ առնուլ բարեհաճիք :

Գ.

Յուսմաղ-Խմութիւն, այդ բնական նպատակը, զոր յաւիտեական օրէնք տիեղեղաց հաստատուած են առ մեն իրաց վրայ, այդ անտնօրինելի պարտքը զոր Արարիչն ամենայնի գրաւ նախ, մարդուն վրայ, այդ մեղաւոր անունը որով քանիցս վերելալը դժուարեցաւ աշխարհ, այդ դեղնիկ

ները, յայրելով յայն նաև Միջագետք և Կիլիկիոյ, Պոնտոսի և Վրաստանի սահմանները՝ որ Հայ իշխանաց հալածակեցան երբեմն, և Հայաստանի դրացի ըլլալով միշտ խառն բնակիչներ ունեցան, կրնամք հայաբնակ աշխարհի շրջանակ մը սահմանել, յորում կը պարունակին Օսմանեան կուսակալութիւնը, Կարնոյ, Վանայ, Տիգրանա-Կերտի, Ատանայի, Սեբաստիոյ և Տրապիզոնի, Ռուսական կուսակալութիւնը երեսնայ և Տիփիսու, և Պարսկական կուսակալութիւնն Դալիքիս : Այդ շրջանակը Հայ աղգութեան թէ ոչ երեք քառորդը, գոնէ երկու երրորդի չափը կը պարունակէ իսկ եթէ դաւառաց վիճակը քննւմք, ոչ ամենեքին համահասարակ են, և մասնաւորութեանց իշխալ մեր նպատակէն դուրս է, անոր համար ալ հոս դադար կառնում և կուղում քաղելով պատասխանել այն հարցման զոր բաղումը, աղգայինք և օտարք, սովոր են կրկնել ինչ էմք, ինչ են այսօր Հայերը :

արահին մէջ քիչ տեղանայած էր պա-
րելու :

Գաղղիոյ դեսպան Վան Գ. Ֆրանկէն
պարահանդէսին սկսած ժամանակը
զարկով կարգադիր յանձնաժողովոյ
անդամոց կողմէն մեծ պատուով ըն-
դունուեցաւ, և երկու ժամու չափ
հանդիսատես եղաւ պարերուն : Երես
մտած միջոցին նուագարանները Գաղ-
ղիական «Մարտի յէջը» երգը նուա-
գեցին 'ի պատիւն Ն. Վանման թեան :
Պարերը մինչև տուած տակեցին :

Այս անձաշուք երեկոյթին հաջոյ-
թին 1000 Նարոյեանի մաս կը հաշու-
իլ յիշեն ընթերցողք թէ յառա-
ջիկայ չորեքշաբթի իրիկուն ալ 'ի նը-
պաստ Գաղղոստիկոս-Արեւելեան ըն-
կերութեան պարահանդէս պիտի
տրուի նոյն արահին մէջ ընդ բարձր
հովանաւորութեամբ Անդր. դեսպան
Վանման Սըր Ժ. Օ. Լէյարտի :

Այս երկու ընկերութիւններն, Ա-
րարատեան և Գաղղոստիկոս-Արեւ-
ելեան, Հայաստանի ուսումնադուրի
մեծիւրոյն համար նախախնամութիւն
մ'եղած են՝ դաստիարակութեան բա-
րիւր մատակարարելով անոնց, և
տարակոյս չը կայ որ եթէ արժան ե-
ղած քաջալերութիւնն ու օգնութիւն-
նքն ազգէն ստանան, իրենց ազգ-
դուա նպատակն աւելի ընդարձակ
կերպիւ 'ի գործ պիտի դնեն :

Ուստի կը յուսամք որ Գաղղոս-
տիկոս-Արեւելեան ընկերութեան հա-
մար տրուելիք պարահանդէսն ալ
բարեսէր ազգայնոց յօժարակոյթ
օժանդակութեամբ ոչ նուազ քաջա-
լերութիւն կատանայ յօգուտ և 'ի
պատիւ ազգին :

Մեր խորին շնորհակալութիւնը կը
յայտնենք յոյս պատուական հանդի-
սին Արթ. Տ. Խմբագրոյն՝ այն համակ-
րական և պատուասիրական խօսքե-
րուն համար՝ որովք լրագրոյս ամեն
օրեայ լինիլ ծանուցած և ազնուա-
բար քաջալեր կարգացած է մեզ :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՁՈՒՄ

Ս. Լիմիտնի ճեմարանի տեսու-
թիւնը այս անգամ զրկած իւր մէկ
մէկ մասնաւոր հրահանգով կը խըղ-
րէ, որ յառաջիկայ օգոստոս 15 ու-
սումնական շրջանին համար տասն և
հինգ հատ աշակերտացու աղայք շը-
կուին Տաճկաստանի այն դաւառ-
ներէն, որք յետագայ ցուցակէն
զուրս մնայած են, որք են՝ Կոս-
տանդնուպոլիս, Ալքիւնուպոլիս, Պը-

վանսանը որ քաղաքակրթեան Եւրո-
պոյ երջանկութեան սկզբնապատճա-
ռն եղաւ, այդ հզօր ակերելակալը
որ կը թափանցէ նաեւ անդ ուր մօտից
գիւրութիւն չեն ընծայեր իրեն, յա-
ռաջագիւնութիւնը՝ նորոգեալ իշխա-
նութիւն մի կաղմից վերջին երկու
դարերուն մէջ, տարբեր բարոյիքն
իւր նախնին իշխանութեանց ձեւերէն
և յարեմանան աշխարհաց՝ ուր կանգ-
նեց իւր կեդրոնական գահը, տարա-
ճեց հետզհետէ իւր տիրապետութեան
հովանին յարեւել և 'ի հիւսիս, և
այսօր առ դուրս մեր հասեալ կայ
և նաեւ յոյ կամաց մերոց պիտի գը-
րուէ զմեզ և պիտի նուաճէ զմեզ
իւր վիճակաւորութեան ներքեւ : Յա-
ռաջագիւնութիւնն յարեմանից և 'ի
հիւսիսայ կը բռնադատէ արեւելեան
և հարաւային ազգերը, տիրութիւն-
ները և աշխարհները, խնդութեամբ
կը նկատուի որ արեւելք և հարաւ-
չեն ուղիւր այդ տիրապետութեան
դէմ նշկահել, և կը հաճին մոռնալ
այն քաղցր և վարդապետ ծին ներ-

քուսա, Տիգրանակերտ, Պայտակա-
ն, Եւֆրատ Գարահիսար, Արթուր-
իւր քանդակ— Իււրիլիս—, Բոստա-
նի Ծրարկոյն, Բլեքիլի դաւառ. Տիգ-
րանակերտի, և Զիւրթիլի գիւղ Մը-
չոյ, որոցմէ զրկուած աշակերտք ի-
րենց ուսումնական ընթացքը ցարդ-
կը շարունակեն :

Ասիէ դատ՝ նոյն տեսլութիւնը
զրկուելիք աշակերտաց համար քանի
մ'անհրաժեշտ պայմաններ կանոնադ-
րած է, ինչպէս է, աշակերտաց որ
կամ աղքատ ծնողաց զուակ լինելը,
հասակին տաներկու տարեկանէն
վար և տասնչորս տարեկանէն վեր
չլինելն, իրենց ծննդեան, ուսման և
վարուց վկայագիրը ունենան իրենց
ձեռքը կամ Ազգային Պատրիարքա-
րանէն և կամ տեղական առաջնորդ-
ներէն, նոյնպէս բժշկաց վկայագիրը
հարկ անհրաժեշտ է նոյս ունենալ
թէ ծաղիլ բնական հիւանդութիւնը
հանած են և կամ պատուաւու եղած
և թէ առողջ կազմուածքի տէր են :
Իրենց ուսման նախակրթական մասը
աւարտած պարտի լինել, այսինքն
հասարակ ընթերցումն և վայելչադ-
րութիւն, քերականութեան առաջին
մասը աւարտած հանդերձ ութ մա-
սանց բանի վերլուծութեամբ, Հին
և Նոր կտակարանաց համառօտ պատ-
մութիւնը լրացուցած, Աւետարանի
թարգմանութիւնը ընելու կարող,
նոյնպէս թուաբանութեան չորս գոր-
ծողութիւնը աւարտած հանդերձ ի-
րենց փորձերովը, և նախական կա-
րողութեան տէր աշակերտք իրենց
հետ տանել հարկաւոր է քանի մը
ճերմակեղէն հանդերձ, երկերկու
թաշկինակ և երկերկու զոյգ գուլպա
և 25 ուրբի, որպէս զի եթէ ճեմա-
րանի մէջ ընդունուիլը անկարելի լի-
նի, զայն վերագրանելու ծախուց
գործածուի այդ դուսմար :

Պատրիարքարան Հայոց (Կիւն)
Կ. Պոլիս 16 յունիւ 1879

Հիւանդանոցի պատուարժան հո-
գաւարձութիւնն հետեւեալ բարե-
գործական տեղեկութիւնները կը հա-
ղորդէ մեզ՝ հանդերձ շնորհակալեօք :

Ա.

Բերայի բնակիչներէն Սօպաճի Մեծ.
Բարսեղ Էֆէնտի Գաղարուսեան, որոյ
գործարանն ալ 'ի Պաճէ գաւառ կը գը-
նուի, իւր սովորութեան համաձայն այս
տարի ալ իւր կողմանէ գործաւորներ զը-
կելով յԱզգ. Հիւանդանոց, ոչ միայն բո-
լոր յարկաց հին սօպաները նորոգելու
այլ մէկ քանի հատ ալ նոր սօպաներ չի-

րեւ : Ինչէ՞ թէ չյապաղէր այլ ևս գոր-
ծոյն արդիւնաւորութիւնը, և մեր
աշուքներն, որ տեսան երջանիկ օր-
ուան արշալոյսը, տեսնային նաեւ
միջօրէն 'ի լրման իւր ճառագայթ-
արձակ պայծառութեան :

Հայը, (Խոնապատակ բոլոր արեւ-
ելեան ազգաց վրայ խօսիլ չէ), Հայը
չսպասեր ձեռն զգոտուով որ առանց
իւր արդեանց կարենայ քաղել այն
աւետարել ապագային պտուղը : Այլ
գրեթէ իրիւր դարէ 'ի վեր կը ճգնի
հրաւիրել յիւր վրայ այն երջանկա-
ւետ ապագային, և տարագէմ ուղե-
ւորութեամբ և պանդխտութեամբ
զրկմամբ և նեղութեամբ, ծա-
խուք և քրտամբ կը ճգնի քաղա-
քակրթեալ ազգաց երկիրները երթալ
և տեսնել, լեզուն սորվիլ և ստանալ,
գիրքերը կարդալ և ուսանիլ, ուս-
մունքներովը կրթիլ և զարգանալ,
և մինչև իսկ գոգիլ իրեն գիւրութիւն
մը հայթայթելու համար՝ նաեւ նոյս
կրօնից և դաւանութեանց աշակեր-
տելէ վրասեցաւ, և որք այսպէս ըրին՝

նելու և պանդխտելու շնորհն ըրաւ :
Հողարարձութիւնն յիշեալ Էֆէնտի
այն դպիւր սովորութիւնն ու շնորհն
հովնեալն հրատարակելով, կը փութայ
առ այն իւր անկեղծ շնորհակալքը յայա-
նել հրատարակաւ :

Բ.

Հողարարձութիւնն ասիէ յառաջ շը-
նորհակալութեամբ հրատարակած էր՝ ա-
ֆիօնի այցելու քնիլ Մեծ. Թօրաֆ օղ-
լու Տիւրքիւրաքի Էֆէնտիին աֆիօնի Մեծ.
վաճառականներէն մէկմէկ մաս աֆիօն
ալ յանուն Հայոց և Յունաց Հիւանդա-
նոցաց հանդանակելու ուստաղբութիւնը
և ըրած հանդանակութիւնը :

Յիշեալ Էֆէնտիին Մեծ. վաճառական-
ներէն այս անգամ դարձեալ 6 1/2 քա-
ռաֆիօն հանդանակած ըլլալով, անոր կէ-
սին 3 1/4 քառ յանձնեց Հիւանդանոցին,
որ ծախուելով 845 դր (Ա. 100 շըլէն)
հասցիլ գոյացաւ :

Հողարարձութիւնն թէ՛ նուիրատու
վաճառականաց և թէ՛ յիշեալ նուիրատու-
ւորութեան հեղինակ Թօրաֆ օղլու Տիւրքի-
ւրաքի Էֆէնտիին կը փութայ իւր խորին
շնորհակալքը մատուցանել :

Գ.

Հողարարձութիւնն դոհուլեալ կը
հրատարակէ հետեւեալ Մեծ. Ազգայնոց
անուանքն՝ որք իրենց նուիրօքն փութա-
ցին միթիւրիւ Ազգային Հիւանդանոցի
կազմակերպ :

Նիկաղար Էֆ. Գրիգորեան Դոհուլեցի
(10) տալ 0 ամ. լիւր :

Խաչատուր և Մ. Թադէոս Մէնդիլեան
(5 1/4) երեք 0 ամ. լիւր և մէկ քառթ.
Յօհան Ալեօն (1) մէկ հարիւրնոց թըղ-
թաղարմ :

Բարեթիւ ոմն, ձեռամբ Յ. Սամանեան
Էֆէնտի (1) մէկ հարիւրնոց թըղթարմ.
Խաչիկ Ալաշվերտեան եղաւ 90 հատ.
Նոյնպէս Մարտիկա բնակող հետեւեալ
Մեծ. անձինք 106 ֆրանք 83 սանթիմ
հանդանակելով (839) ութն հարիւր յի-
սուն և ինը քառ թաթաթիւն նուիրեցին Հի-
ւանդանոցին :

Մեծ. Գալուր Էֆ. Մէլեան ֆրանք 50
» Գալուր » Թիւրապեան » 20
Բարեթիւ ոմն » 56 85

106 85

Իսկ Գրիգոր Էֆէնտի Մէլիմիլեան
Ս. Մենդեան տօնի առթիւ այցելութեան
հարկէն ազատ մնալու համար նուիրած
էր մէկ արծաթ մէճիւր :

Հողարարձութիւնն յիշեալ Մեծ. Է-
ֆէնտիներուն ցոյց տուած ազգասիրա-
կան եւանդը գովելով, կը փութայ իւր
խորին շնորհակալքը յայտնել հրապա-
րակաւ :

1879 յունի. 9 Մնամք յարդանօք
Ի դիմաց Հող. Հիւ-
Ատենաղախի Ստենաղախ
Տ. Կիւն-Էֆէնտիին Մ. Գալուրեան

ու ընդունայն ինչ ըրած եղան իրենց
ազգութեան ապագային նկատմամբ :

Այլ յիշելով իսկական ժամանակն,
և երբ յառաջագիւնութեան բարեսէր
ուղեղն և աշխարհայէն ազգեցութեան
ներքեւ կը յիշագրուի, միշտ 'ի շարէն
'ի բարին, և 'ի բարեոյն 'ի բարեգոյնն
կը յիշագրուի, և ալ կարեւոր չըլլար
ինչ որ յայնպէս հարկաւոր էր, և
ոչ ալ պարտաւորիլ այն զրկուած զոր
ուրիշ տան յանձն չառնուլ փոխա-
կար էր : Այսօր մեր յառաջագիւնու-
թեան սկզբնական ազգեցութեան
ուղեղները եմք : աւստահալած կծու
դեղորէից կիրառութեան թերեւս կա-
րենամբ ինքզինքնիս ազատ համարիլ
և կաղութիւն դեղոց միայն կը կարօ-
տիմք, որով հաստատուիմք առողջ
կենաց ընթացից մէջ : Բայց ինչո՞ւ ես
առակօք կը խօսիմ : Մեր ներկային
վրայ խօսքս աւարտած առեւնա կը-
սէի յայտնապէս սկզբնաւորութիւն
նիս աղէկ է, այլ սկզբնաւորութիւն
է. ինչ որ կայ՝ դեռ տկար և յոգ-
դողուն է, դեռ նեղ և անճուղ է :

... Խմբագիր :

Թաղիս երկուս վարժարանաց 'ի
նպատ «արտաքայ կարգի մեծ վի-
ճակահանութիւնը» որ դեկտ. 31
կիրակի օրը պիտի գործադրուէր,
յառաջիկայ կիրակիէ յետ աւարտ-
ման Ս. Եկեղեցւոյ պնդումն թա-
ղիս Ս. Առաքելոց վարժարանին մէջ
հրապարակաւ պիտի կատարուի :

Ուստի 'ի գիտութիւն մեծարդոյ
Ազգայնոց այն ազգ. Ջեր ազգ. ուս-
լրագրին մէջ հրատարակելիք կը
լինելու :

Սրտագին ողջունելով զՁեզ՝
17 յունիւ 1879 Մնամ աղօթարար
Եֆէնտի-Պարու Հոսէֆ Վ. Գիւնտեան

ԸՆԴ. ԲԱՐՁՐ ՀՈՎԱՆԱՌՈՐՈՒԹԵԱՄԲ

ԱՍԵՄԱՓԱՅԼ ՍԵՐ Օ. ԻՅԱՐՏԻ

ՄԵՆ ՊԱՐԱՆԱՅԻՄ

Ձեռնագիր (Թիւ 24) յիշագրած
Ի ՆԱԽԱՐԱՐԱՅԻՄ—ԱՐԵՎԵԼԵԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Մարտի Կարգադիր Մանուկեան

Նախագահ. — Պ. Ն. Ֆրանկէր, Կոստան-
կան Պանդայի Ընդհ. անօրէն
Գանձապետ. — Մեծ. Անտոն Էֆ. Հաճեան.
Գարտուղար. — » Գալուր » Գաղաղեան
Մեծ. Աստուածատուր Էֆ. Ջանքի :

- » Աւետիս Էֆ. Գոյալեան.
- » Բարսեղ » Հալաճեան.
- » Գէորգ » Արաւանեան.
- » Գէորգ » Սամանեան.
- » Գրիգոր » Կիրիլլիկեան.
- » Միքայէլ » Մոմեան.
- » Միքայէլ » Փորթաղալեան.
- » Յովհաննէս » Նուրեան.
- » Սարգիս » Սվաճեան.
- » Սեպուհ » Մագուռեան.
- » Վեհան » Ալիւան.
- » Վեհան » Ապտուլլահ.
- » Տիգրան » Գարակօղեան.
- » Տօթթօր » Փէշախան :

ԾԱՆՈՒՅՈՒՄ

ՏԱՄԱՏԵՆ ԶՈՒՂԱՐԱՆ

Օրոն + քառ իւ 465

Հայ, Տաճիկ և Կուրդացի տղանց
բական տաներ իրենց ամեն տեսակ
ներով կը գանուին պատրաստ իրաւ
արժան գիներով :

Ի Լ Ա Ն

Նիգամիյէ տեղադրանքայից Սա-
րաճանէնի իշխան լուղուր օրու միւ-
պայեա օլունանագ օլան օն իքի պին
օգդա պալըգ եղընըն իւլ պին օգ-
դա օլ թարիլի դարարնուտ հէման
վէ գոտուր տալին շէհրի իքիլէր
պին օգդա թէսիլմ օլունապաղ ար-
գասը պլնմագ վէ համանը վէրիլէճէր

Տարբ մի չարակիր Հայոյն, դանէ այն
տարներէն որք աւելի տիրական,
պիտանի և հարկաւոր են. այլ կը
պակսի այն տարներուն մեծնայն և
զօրանալը, ընդարձակելն և տարած-
ւիլը, և զլիստորաբար կը պակսի
այս տարներուն 'ի բուն իսկ պարու-
նակ հայաբնակ դաւառաց մոռնալն և
հաստատուիլը :

Ով որ Հայուն ապագայն ըրած
կամ լած առեւ կը կարծէ իւր մշտ-
քովը անեղը կարելոյն ընդարձակ
ովիկանին մէջ ընկղմելով և բիւրա-
կերպ հնարաւորութեանց պիտի մէջ
ծախալով այն անդադու յատակէն ան-
գիւտ մարդարեւոր որաւ և 'ի լոյս
ածեւ, յայտնապէս կըսեմ այնպիս-
ւոյն թէ երազատես է և բանդա-
գու չոյ :

Գալուր Բաւալ

ՄԻՆԶԵՒ ԳՈՒՆՎԱՐ 31

Ժ. ա. **Ռոմեական էփեսոս շաբթիկահարգութիւն**

2 15 Եէնիմ. Մէղարայ. Պէոյիւքտ. Թարապ. Եէնիք. Սթէն
Պշամհ. Բ. Հիսար, Պէպէք, Արնով. Գուր. Օրթաք. Պէչիկ

2 15 Պէլքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. վանիք. Չէնկ.
Պէյլ. Գուզդ. Գապաթաշ :

2 15 Արնավ. վանիք. Չէնիէլ. Պէյլ. Գուզդ. Գապաթ :
2 30 Արնավաքաշօյէն , Գուրուէ . Օրթաք . Պէչիկ .

3 Եէնիմահ. Մէղարայ. Պէոյիւքտ. Թարապ. Եէնիք. Էմիրիկ.
Բ. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուէ . Օրթաք. Պէչիկթաշ :

3 Բ. և Ա. Գապազէն , Մէղարայ . Պէոյիւքտ. Թարապ.
Պէլքօզ, Բաշապ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. վանիք. Չէն-
կէլ. Պէյլեր. Գուզդ. Գապաթաշ :

4 15 Եէնիմ. Մէղարայ. Պէոյիւքտ. Թարապ . Եէնիք . Սթէն,
Էմիրիկ. Պշամհ. Բ. Հիսար , Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք.
Պէչիկթաշ :

5 30 Եէնիմ. Մէղարայ. Պէոյիւքտ. Թարապ. Պէլքօզ, Եէնիք. Է-
միրիկ. Բ. Հիսար, Արնավ. Գուր. Պէյլեր. Օրթաք. Պէչիկ :

6 30 Եէնիմ. Պէոյիւքտ. Թարապ . Պէլքօզ , Եէնիք . Էմիրիկ .
Գանլ . Բ. Հիսար, Գանտ . Արնավ. Չէնկ. Պէյլ . Օրթաք.
Գուզդ . Պէչիկ . Խապիւտար :

7 45 Ա. և Բ. Գապազէն , Մէղարայ . Պէոյիւքտ . Թարապալտ ,
Եէնիք . Էմիրիկ . Բ. Հիսար , Արնավ. Գուր. Օրթ , Պէչիկ :

8 45 Պէոյիւքտ. Պէլքօզ , Բաշապ . Գանլ . Ա. Հիսար, Գանտ .
վանիք. Չէնկ. Պէյլ. Գուզդ. Խանկ .

9 Եէնիմահ. Մէղարայ. Պէոյիւքտ . Թարապ . Եէնիք . Էմիրիկ .
Բ. Հիսար Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէչիկթաշ :

10 Եէնիմ. Մէղարայ. Պէոյիւքտ. Թարապ. Եէնիք. Էմիրիկ. Բ.
Հիսար, Արնավ. Օրթաք. Պէչիկթաշ :

3 15 Գապարթաւ, Խաչ. Պէշիկի, Գուշկ. Օրթաք, Պէյլ. Չէնկ.
Արնապ. Գանձ. Բ. Հխար, Գանկ. Լլիրիկ. Ենկը. Պէյ-
քօշ, Թարապ. Պէյրիքտ. Ենիմահ. Բ.
3 30 Պէշիկիթաւ, Օրթաք. Գուր. Արնիկ. Պէյլք. Բ Հխար, Լլիրիկ.
Սթէն. Ենկը. Թարապ. Պէյրիքտ. Մէյարապ. Ենիմահ.
Հալլէ.
5 Խաչիխար, Գուշկ. Պէյլ. Չէնկ. Վանկը. Գանձ. Ա. Հխ-
ար, Գանկ. Բաւ. Պէյքօշ, Պէյրիքտ. :
5 Պէշիկիթաւ, Օրթաք. Արնապ. Պէյլք. Բ. Հխար, Լլիրիկէն,
Ենկըթապ. Պէյքօշ, Թար. Պէյրիքտ. Մէյար, Ենիմահ. Բ.
և Ո. Գալաք.
6 30 Խաչիխար, Պէշիկի, Գուշկ. Օրթաք, Պէյլ. Չէնկ. Ար-
նապ. Գանձ. Բ. Հխար, Պալաճ. Ենկը. Թարապ. Պէյրիք.
Ենիմահ. :

2111041 5000 BUS

ՏՓԹԻՍ: Պ. Եհիզայաս Տ. Առնդեան.
ԻՄԱԼԻՒՅՈՒ ՓԷ.....⁴ Լեւոն:

Հայ պատմութիւնկոթ թեան ըստ

8 Պէշիկիթ աշ, Օրթթաք Արճաթ, Պէշիթք, Բ. Հիսար, Էմիրի, Ենիթի
Թարապ, Պէշիթքա Ենիթիաւ :

9 39 Պէշիկ, Օրթթաք, Արճաթ, Բ. Հիսար, Էմիրի, Ենիթք, Պէշք
Թարապ, Պէշիթք, Միշարապ, Ենիթիաւ :

10 Գուգուհեւ, Պէշի, Չէնի, Ղանիթ, Գառն, Ա. Հիսար, Գառն
Բաշապ, Պէշքաշ, Պէշիթքաթի Միշարապ, Գաւաղի Ենիթ :

10 36 Պէշիկիթ աշ, Օրթթաք, Գուգ, Արճաթ, Պէշիթք, Բ. Հիսար, Է
միրիկի, Ալի Են, Ենիթք, Թարապ, Պէշիթքա, Միշարապ, Են
Ենիթաւ :

11 Պէշիկիթ աշ, Օրթթաք, Գուգուհեւ, Արճաթ, Պէշիթք, Բ. Հիսար,
Էմիրի Ենիթք, Թարապ, Պէշիթքա, Ենիթիաւ :

11 Գաւաղի, Գուգ, Գուգ, Պէշի, Չէնի, Արճաթ, Գառն, Թ
Հիսար, Գառն, Բաշապ, Պէշքաշ :

11 35 Պէշիկիթ աշ, Գուգ, Օրթթաք, Պէշի, Չէնի, Արճաթ,
12 Պէշիկիթ աշ, Օրթթաք, Գուգուհեւ, Արճաթ,

$h = \frac{1}{2} - \tau - \rho$	$h = \frac{1}{2} - \tau$	$h = \frac{1}{2} - \tau - \rho$	$h = \frac{1}{2} - \tau$
J, m	J, m	J, m	J, m
	8 15	2 25	8 30
2 30	8 35 $q_L p_L^D m_L$	3 40	8 50
3	9 10	3 35	9 20
3 25	9 30	4	9 50
3 50	10 5	4 25	10 15
4 15	10 25	4 55	10 40
4 40	10 45	5 25 $q_L p_L^D$	11
5 10	11 5	6 5	11 15
5 30	11 25	6 45	11 35
6 5	11 40	7 15	11 50
6 40	12	8	12 5
7 20			

Ἰσοπέλας ἡρώδης		Ἰσοπέλας ἡρώδης	
Ἰσοπέλας ἡρώδης	Ἰσοπέλας ἡρώδης	Ἰσοπέλας ἡρώδης	Ἰσοπέλας ἡρώδης
2 30	8	2 30	8
3 5	8 40	3 5	8 45
3 45	9 20	3 45	9 20
4 30	10	4 30	10
5	10 30	5	10 30
5 25	11	5 25	11 5
6	11 30	6	11 35
6 35	12	6 25	12 5

քով, Գին մէկ մէճիւտ արծաթ:

Ի ՅՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԴՐՈՅ
ՂԱԿԱԹԱ ՆՕՐՕ ԻԱՆ

ՏՓԽԻԱ. Պ. ՆԻԿՈՂԱՅՐՈՍ Տ. ՂԼՈՆԳԵԱՆ.
ԿԱԼԿԱԹԱ. ՊԵՐՐՈՍ աղա ՀԷԲԻՈՒԿԱՆ: